# Ն. ԱՄԵՆ. Տ. ԿՅՈՒՐԵՂ Բ. ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՐԻԱՐՔԻ ՊԱՂԵՍՏԻՆ ՎԵՐԱԴԱՐՁԸ

Նորին Ամեն. Տ. Կյուրեղ Բ. Սրբազան Պատրիարք Հայրը ներկա ըլլալե վերջ Ս. Էջմիածնա Ազգային-Եկեղեցական Համագումարին, Թեհրանեն օդանավով Երուսաղեմ վերադարձավ։



Ի լուր Պատրիարք Սրբազան Հոր գալստյան, զինք դիմավորելու համար ինքնաշարժներով Լիդդայի օդանավակայանը փութացած էին Ծնորեն ժողովի հոգեշնորհ հայրեր, Յոպպեի հոգեշնորհ հայրեր և Հայ Երիտասարդաց Միության ներկայացուցիչներ, Երուսաղեմեն տոքտ. Վահան Գալպիյան, պ. Լևոն Գևորգյան և ներկայացուցիչներ տեղվոցս Հայ Գեղարվեստասիրաց, Հայկական, Հայ Երիտասարդաց, Երուսաղեմի Հայոց Բարեսիրական, Հ. Բ. Ը. Միության, Մարաշի և Զեյթունի Հայրենակցական Միությանց, որոնք բոլորն ալ ստացան Նորին Ամենապատվության օրհնությունները և Մայր—Հայրենիքի ողջույնները։ Ինքնաշարժներու շքախումբը Երուսաղեմ հասավ երեկոյան ժամը 7-ին ու Նորին Ամենապատվությունը Դավթի դռան մոտ ընդունվեցավ Ս. Հակոբյանց Միաբանության, հարանուանությանց ներկայացուցիչներու և պետական ներկայացուցիչ պ. Մանթուրայի կողմե և ապա Հրաշափառով մուտք գործեց Ս. Հակոբա Մայր, Տաճարը, անցնելով գորգերով ծածկված փողոցեն, զինք՝ դիմավորելու եկած խուռներամ բազմության և Հայ Երիտ. Միության ու Հ. Մ. Ը. Միսկաուտներու մեջեն։ Հատկապես լուսազարդված Ս. Հակոբա Տաճարը մտնելե վերջ, Նորին Ամեն.-ը նախ առաջնորդվեցավ Ս. Գլխադրի Մատուռը և ապա ավագ խորանը։ Արարողութենեն վերջ իր խրախուսիչ խոսքերով խանդավառեց հավատացյալ և հայրենաբաղձ ժողովուրդը։ «Կօրհնեմ, ըսավ, հրաշափառ Աստուծո կամքը, որ հաճեցավ այցելել Հայաստանյայց Ս. Եկեղեցին և 1945 տարին դարձնել նվիրական թվական մը։ Այս ուրախ առիթով ձեզի կը փոխանցեմ մեր Եկեղեցվո Պետին՝ Նորին Ս. Օծության օրհնությունները, ջերմագին մաղթանքները, սիրաշեղ խոսքերն ու զգացումները։ Ձեզի կը բերեմ Ս. Էջմիածնա ողջույնները, Հայաստանի բոլոր տաճարներու և եկեղեցիներու եղբայրական բարևները, ողջույնները ձեր հերոս հայրենակիցներուն, որոնք հաղթական դուրս եկան հայրենական այս մեծ պատերազմեն, ոչինչ խնայելով մարդկային բարօրության և խաղաղության համար։ Ձեզի

կը բերեմ ողջույնները մեր հայ մայրերուն և քույրերուն, որոնք այրերու բացակայության իրենց բահերով կարողացան հաղթանակը շահիլ։ Եվ վերջապես ողջույնները մեր մայրաքաղաք Երևանին, հայ մտավորականության, համալսարանականներուն և ամբողջ ուսանողության, ողջույնները մեր բազմահազար ժողովուրդին՝ բոլոր քաղաքներուն և գյուղերուն։

«Ինծի հանձնված այդ գեղեցիկ գանձը ձեզի կուտամ, ան որ կուգա Ս. Էջմիածնեն, մայր Հայրենիքեն, առեք այս սիրագորով զգացումները և նոր հավատքով փարեցեք Հայաստանյայց Ս. Եկեղեցիին։

«Սիրելի ժողովուրդ, ցնծացեք, որ ունինք հայրենիք մը ազատ և անկախ՝ Արարատի փեշերուն ու միանգամայն նորընտիր Հայրապետին փքրև ավանդ պահեցեք ձեր հոգիներուն խորը թե կապրիք օտար պետության մը հովանիին տակ ու հարկադրված եք լիովին իրագործելու ձեր քաղաքացիական բոլոր պարտականությունները, որպեսզի արտասահմանի մեջ կարենաք պանծացնել ձեր Հայու խորունկ հավատքը։

«Պարտականություն հանձնված է ինծի Նորին Ս. Օծության Տ. Տ. Գևորգ Զ Կաթողիկոսի կողմե հայտնելու Հայրապետական օրհնությունները Նորին Վսեմ. Կառավարիչ Ֆիլդ Մարշալ Վայքաունթ Լորտ Կորթին, պետական պաշտոնյաներուն և հարանուանություններուն։ Կը փոխանցեմ նաև բոլոր Պաղեստինահայերուն Վեհափառին օրհնությունները և բարեմաղթությունները, ու կը մաղթեմ, որ դուք դասեր հանեք ձեր կյանքին համար այս պատգամներեն»։

Ապա շնորհակալություն հայտնեց Լուսարարապետ Գեր. Տ. Եղիշե վրդ. Տերտերյանին, որ այնքան ձեռնհասությամբ կարողացած էր իր բացակայության վարել Միաբանության գործերը, ինչպես նաև պատրիարքական փոխանորդ Հոգ. Տ. Գևորգ վրդ. Ճանպզյանին։ Շնորհակալություն հայտնեց նաև պետական և հարանուանությանց ներկայացուցիչներուն և համայն ժողովուրդին, որոնք եկած էին զինքը դիմավորելու համար և հայրենի ողջույններն ու պատգամները լսելու։ «Այս բոլորը, ըսավ, կընդունիմ ոչ թե ինծի համար այլ հանուն Ս. Աթոռին»։

Ապա Նորին Ամեն.-ը ժառանգավորաց սաներու շարականներու երգեցողությամբ, թափորով Պատրիարքարան առաջնորդվեցավ, ուրուն հետևեցավ նաև խուռներամ ժողովուրդը։ Պատրիարքարանին մեջ, հանուն Միաբանության, բարի գալուստի խոսքեր ըրավ Լուսարարապետ Գեր. Տ. Եղիշե վրդ. Տերտերյան, ըսելով. «Ս. Հակոբյանց Միաբանությունը ավելի քան ուրախ է, որ Ձերդ Ամենապատվությունը կը վերադառնա մեզի ճառագայթացումովը մեր արևավառ հայրենիքին. բարի գալուստի խոսքերը կրկնապես սրտագրավ կը դառնան, երբ Ս. Աթոռը վերստին կունենա իր գահակալը։ Ուրախության զգացումներով բարի գալուստ կը մաղթենք Ձեզի»։

Բարի գալուստի այս խոսքերուն պատասխանեց Նորին Ամենապատվությունը, և ի միջի այլոց ըսավ. «Տարակույս չունիմ այս խոսքերուն անկեղծության։ Առաքելական այս Աթոռը, որ առաջին կրոնական կեդրոնը եղած է, առաջին օրերեն իսկ կապուած է Մայր Աթոռին և ամենեն մոտիկը եղած Ս. Էջմիածնին. չէ բաժանված անկե հակառակ անոր շուրջ կուտակված դժբախտ երևակայություններուն։ Ուրիշ աթոռներ կրնան փոխվիլ, տեղափոխվիլ, սակայն այս աթոռը կը մնա հավիտյան ու իր հետ նաև այս կապը։

Ուրախ եմ որ իմ բացակայությանս Աթոռը մնացած է իր բարձրության վրա շնորհիվ հոգեշնորհ հայրերուն։ Բարի գալուստ կը մաղթեմ նաև Գեր. Տ. Մամբրե Արք. Գալֆայանին, Գեր. Տ. Գարեգին Արք. Խաչատուրյանի, Գեր. Տ. Տիրան Եպս. Ներսոյանի, և Գեր. Տ. Սիոն Եպս. Մանուկյանի, որոնց հանդիպելու հաճույքը ունեցա նաև Մայր-Հայրենիքի մեջ։ Կ'ողջունեմ զիրենք ու կը մաղթեմ որ պտղաբերի իրենց առաքելությունը»։

Նորին Ամենապատվութենեն վերջ խոսք առավ նաև Գեր. Տ. Գարեգին Արք. Խաչատուրյան ու մաղթանքներ ըրավ Ս. Աթոռին, անոր Գահակալին, Միաբանության և Հայաստանյայց Ս. Եկեղեցվո բարօրության և պայծառության համար, որուն սրտառուչ բառերով պատասխանեց Նորին Ամենապատվությունը։

Խանդավառ ժողովուրդը և Միաբանությունը մեկնեցան Պատրիարքարանեն առնելե վերջ Նորին Ամեն. Ս. Աջը և իրենց հետ տարին հայրենի և հայրապետական օրհնությունները։

ԹՂԹԱԿԻՑ

(«ՎԵՐԱԾՆՈՒՆԴ» թիվ 1329)